ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «**Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները անձի «Ես» կառուցվածքում**» թեմայով ԺԹ.00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ներկա ժամանակահատվածը մի շարք երկրների համար ուղեկցվում է սոցիալական, տնտեսական ճգնաժամերով և ռազմական բախումներով: Իրադարձությունների այսպիսի շղթան անշուշտ իր բնույթով մարդկանց մոտ ձևավորում է հետվնասվածքային սթրեսային խանգարումների ֆոն, որը էլ ավելի կայուն է կորուստ կրած անձանց համար:

Գրախոսվող աշխատանքը ամբողջովին նվիրված է հետվնասվածքային սթրեսի ուսումնասիրմանը, նրա դրսևորման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին և անձի ԵՍ-ի կառուցվածքում տեղ գտած ֆունկցիոնալ բաղադրիչների փոփոխություններին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորսը գլուխներից, եզրակացությունից, 213 անուն գրականության ցանկից, գործնական առաջարկություններից, մեթոդական հանձնարարություններից և հավելվածներից:

<u>Ատենախոսության առաջին գլխում</u>՝ «**Հետվնասվածքային սթրեսը որպես գիտական քննարկման հիմնախնդիր**», ատենախոսը անդրադարձել է հետվնասվածքային սթրեսի դրսևորման հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին, ախտանիշներին, տեսական մոդելներին, ինչպես նաև հոգեբանական վնասվածք/տրավմա կրած անձանց հոգեբանական առանձնահատկություններին: Նշվում է, որ հետվնասվածքային սթրեսը առաջանում է այնպիսի իրադարձությունների ժամանակ, որը կապված է կյանքի լուրջ սպառնալիքի հետ և ուղեկցվում է ինտենսիվ վախի, սարսափի, հուսահատության և այլ

զգացումներով (Մկրտումյան Մ., Իսան Դ., Լազերնայա Ե.)։ Նկարագրված են նաև հետվնասվածքային սթրեսի հիմնական ախտանիշներն իրենց խմբավորումներով։ Բացի հիմնական ախտանիշներից, ի լրացում, ներկայացված են նաև լրացուցիչ ախտանիշները։

Մանրամասնորեն քննարկվել է «սթրեսի», «վնասվածքային սթրեսի» և «հետվնասվածքային սթրեսի» փոխհարաբերակցությունը։ Կարևորվել է նաև Վ. Անտիպովի կողմից մշակված այն դրույթը, որ արտակարգ իրավիճակներում հուզական համակարգն առաջինն է միանում սթրեսային հակազդմանը և կազմում վարքային դրսևորումների հիմքը։ Ներկայացնելով սթրեսակայունությունը, ատենախոսը հիմք է ընդունել տարբեր հեղինակների կարծիքները, ըստ որի հուզական սթրեսի նկատմամբ կայունությունը անհատական է (Մկրտումյան Մ., Ազրել Յա.,Վասիլյուկ Ֆ. և այլ)։ Սթրեսային իրավիճակներից դուրս գալու փուլերը ներկայացված են համաձայն Ն.Տարաբրինային. *Հուզական արձագանք, Իրականության ընդունում, Հարմարում նոր ստեղծված իրավիճակին։*

Հետվնասվածքային սթրեսը վնասվածքային սթրեսի նկատմամբ ուշացած ռեակցիա է, որը հոգեբանական խանգարումներ կարող է առաջացնել գրեթե բոլոր մարդկանց մոտ։ Հետվնասվածքային սթրեսի ենթատեսակները բերված են համաձայն Վ.Ռոմեկի և Վ.Կոնտորովիչի։ Դրանք են՝ սուր տեսակը, քրոնիկ և հետաձգված, որոնք տարբերվում են ըստ ժամանակի տևողության։ Հետվնասվածքային խանգարումները ներկայումս համալրվել են հետվնասվածքային անձնային խանգարումներով (PTPD)։

«*Վնասվածքային իրավիճակների և հետվնասվածքային սթրեսային հակազդումների տիպերը*» ենթագլխում ներկայացված են նաև վնասվածքային իրավիճակների տիպերը, ինչպես կախված անձնային առանձնահատկություններից, այնպես էլ ժամանակի տևողությունից։

<u>Աշխատանքի երկրորդ գլուխը,</u> «**Անձի Ես կառուցվածքի հոգեբանական վերլուծությունը**», որը բաղկացած է երկու ենթագլուխներից, նվիրված է անձի Ես կոնցեպցիայի վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցմանը։ Ներկայացվել է «Ես կոնցեպցիայի» ուսումնասիրման Ու. Ջեյմսի տեսությունը, որտեղ առանձնացված են «Ես»-ի օբյեկտիվ, սուբյեկտիվ կողմերը և բաղկացուցիչները։ Կարևորելով սոցիալական միջավայրի ազդեցությունը «Ես կոնցեպցիայի» ձևավորման գործում, նշված է վերջինիս նշանակությունը մարդ-միջավայր փոխհարաբերություններում։

«Ես կոնցեպցիայի» դերը և կարևորությունը անձի կյանքում ներկայացված է որպես ինքնաընկալման, ինքնադիտման և ինքնավերլուծության արդյունք:

Հստակ սխեմաներով և նկարներով պատկերված և հիմնավորված են «Ես կոնցեպցիայի» բաղադրիչները, գործառույթները: Անդրադարձ է կատարվել «Ես» կառուցվածքի ֆունկցիոնալ բաղադրությանը, որը ամբողջականացնում է անձի ինքնաճանաչման, ինքն իրեն գնահատելու, սեփական անձի վերաբերյալ պատկերացումների, ինքնակառավարման գործընթացները, ինչը ապահովում է անձի ինքնուրույնությունը: Աշխատանքում հաջողվել է ուսումնասիրել ֆունկցիոնալ բաղադրիչների փոփոխությունները:

Ինքնագիտակցությունը, որպես «Ես կոնցեպցիայի» ֆունկցիոնալ մեխանիզմ, ներառում է գիտակցության տարբեր մակարդակներ: Այն արտահայտում է մարդու ներքին և արտաքին աշխարհի փոխներգործությունը, ինչպես նաև դրանց միջև կատարված իրադարձությունները: Այն իր մեջ ներառում է մտածողությունը, ընկալումը, երևակայությունը և այլն: Աշխատանքում նկարագրված են նաև «Ես կոնցեպցիայի» բաղադրիչները ըստ Ա.Կոլյադինի.

- *Կոգնիտիվ բաղադրիչ*, որը ապահովում է որակների, ընդունակությունների, արտաքինի, սոցիալական նշանակության պատկերացումները և ներառում է իր մասին գիտելիքներ:

- *Հուզական բաղադրիչ*, որը կապված է անձի հնարավորությունների, պահանջմունքների, հետաքրքրությունների, իդեալների և արժեքների գնահատման հետ:

- *Կամային բաղադրիչ*, որը հանդես է գալիս որպես ինքնատիպ ինտեգրալ, որը շեշտը դնում է կոգնիտիվ, հուզական, կամային տարրերին:

Ներկայացված ենթագլխում քննարկված են «Ես կոնցեպցիայի» վերաբերյալ նաև այլ հեղինակների տեսակետները. Ա.Ասմոլով, Ազապով Վ., Պատնյով Ֆ., Դ.Զիգլեր, Լ.Խյոլլ և այլ:

Աշխատանքի երրորդ՝ «*Անհայտ կորածների հարազատների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունների և անձի «Ես» կառուցվածքի փոփոխությունների հետազոտումը*» գլուխը նվիրված է անձի «Ես» կառուցվածքի

բաղադրիչների հոգեֆիզիոլոգիական բնութագրերի գործառնական փոփոխությունների հետազոտման գործընթացին:

3.1 ենթագլխում ներկայացված է հետազոտական աշխատանքների կառուցման առանձնահատկություններն ու հիմնական բովանդակությունը: Հետազոտությունը կազմակերպվել է երկու խմբերում՝ հետազոտական և ստուգիչ: Որպես մեթոդաբանական հիմք հանդիսացել են Հ.Սելյեի, Ռ.Լազարուսի, Ի.Մալկինա-Պիխի, Ն.Տարաբինայի և այլոց դրույթները:

Հետազոտությանը մասնակցել են 240 անձ, 26-72 տարեկան, 1990թ. Արցախյան պատերազմում անհայտ կորած և զոհված ազատամարտիկների ընտանիքներից: Այն բաժանվել է համապատասխան 2 խմբերի. հիմնական - հետազոտական և ստուգիչ:

Հետազոտությունները անցկացվել են 2 փուլերով: Առաջին փուլում իրականացվել է պիլոտային հետազոտություն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են 7 մեթոդիկաներ:

Կիրառվել է նաև հետազոտական տվյալների մշակման համար մաթեմատիկական վիճակագրական մեթոդը:

<u>Աշխատանքի 4-րդ գլուխը</u> նվիրված է *«Հոգեվերականգնողական աշխատանքներից հետո հետազոտվող երևույթների ռեթեստավորման արդյունքների համեմատական վերլուծությանը»:* Հետազոտության ընթացքում պատահականության սկզբունքով ձևավորվել է նոր խումբ, ավելի քիչ քանակությամբ: Խմբի անդամների հետ իրականացվել է վերականգնողական աշխատանք: Հոգեվերականգնողական աշխատանքները ավելի շատ նպաստել են հուզական վիճակների կարգավորմանը: Մեկամսյա հոգեվերականգնողական աշխատանքները նպաստել են տագնապայնության մակարդակի նվազմանը: Դրական փոփոխություն են կրել նման աշխատանքներից հետո զգայաշարժողական գործողությունները և աշխատունակությունը:

Հետազոտության արդյունքները ներկայացված են 18 գծանկարներով: Աշխատանքը ավարտվում է եզրակացություններով և գործնական առաջարկներով:

Սեղմագրի շարադրանքը ամբողջովին համապատասխանում է ատենախոսության հիմնադրույթներին:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը հեղինակի ուշադրությանն ենք հրավիրել մի քանի ցանկություններ և թերություններ.

1. Աշխատանքում ընդգրկվել են մեթոդիկաներ (թվով 7), սակայն նշվում է, որ կիրառվել է նաև հարցազրույցի , դիտման և հոգեբանական զրույցի մեթոդները, սակայն բովանդակային առումով հստակ ներկայացված չեն:
2. Քանի որ հետազոտությանը մասնակցել են 2 խումբ՝ ստուգիչ և հետազոտական, նպատակահարմար է ներկայացնել թե ի՞նչ սկզբունքով եք իրականացրել այդ բաժանումը և ի՞նչ նպատակ է հետապնդում առաջին փուլի պիլոտային հետազոտությունը, որը ընդգրկել է 50 մասնակից:
3. Կետելլի 16 գործոնային մեթոդիկայի արդյունքները լավ կլինի ներկայացնել հիստոգրամների տեսքով, քանի որ գործոնները գծային կախվածություն չունեն և չեն արտացոլում բուն իմաստը: Հետազոտական արդյունքների մաթեմատիկական վերլուծությունը, ավելի հստակ պատկերացնելու համար, նպատակահարմար է ընդհանրացված ձևով ներկայացնել հետազոտության վերջում:
4. Աշխատանքի եզրակացությունները նպատակահարմար է ամփոփ, ավելի կոնկրետ ներկայացնել:
5. Աշխատանքում կան տեխնիկական թերություններ, օրինակ՝ 6-րդ, 7 –րդ նկարները տեսական բաժնում չունեն վերնագրեր: Հետազոտական մասը բաժանվել է 2 գլուխների՝ 3-րդ և 4-րդ, որոնք ևս կազմում է ատենախոսության բաղկացուցիչ մաս, բայց բովանդակության մեջ ներառված չի:

Սակայն վերը նշված թերությունները չեն ազդում աշխատանքի որակի վրա, և գտնում ենք, որ Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները անձի «Ես» կառուցվածքում» ԺԹ.00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն և լիարժեք գիտական աշխատանք է, որը համապատասխանում է

թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս,
ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր,
հոգեբանական գիտությունների թեկնածու Վ. Ռ. Պապոյան

Վ. Ռ. Պապոյանի ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար՝ Լ.Հովսեփյան

ԿՏ.

«11»-----05-----2021թ.